ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«21» .....11..... 2019թ. N03/16.2/20737-19

«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն»
ՀԿ-ի գործադիր տնօրեն Լ. Ներսիսյանին

Ի պատասխան Ձեր 01.11.2019թ.
№ Ե-2664 գրության

Հարգելի պարոն Ներսիսյան

Առաջին հերթին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը՝ կատարված հանգամանալից ուսումնասիրության և արժեքավոր առաջարկների համար:

Հարկ ենք համարում նշել, որ տեղական ժողովրդավարության ամրապնդման խնդիրները գտնվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) ուշադրության ներքո, և դրանց լուծմանն ուղղված ընթացիկ և նպատակային միջոցառումները ներառվում են ՏԿԵՆ կառուցվածքային համապատասխան ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերում:

Նշենք, որ կայքերի շահագործման նկատմամբ մշտադիտարկումները մեր կողմից իրականացվում են մշտապես, և հետևաբար, տիրապետում ենք այդ առումով առկա իրավիճակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությանը:

Կից ներկայացնում ենք ՏԿԵՆ դիրքորոշումները՝ զեկույցի «7. Առաջարկություններ» բաժնում Ձեր կողմից ներկայացված առաջարկների վերաբերյալ:

11/21/2019

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: TERTERYAN VACHE 1201620635

Վ. Տերտերյան

ԿԱՐԾԻՔ

ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների պաշտոնական համացանցային կայքերի մոնիտորինգի միջանկյալ զեկույցում ներկայացված առաջարկների վերաբերյալ

Զեկույցի «7. Առաջարկություններ» բաժնի 1-ին, 3-րդ, 5-րդ և 7-րդ առաջարկությունները, որոնք ենթադրում են օրենսդրական փոփոխություններ, համարում ենք արժեքավոր և հայտնում ենք, որ դրանք մեր կողմից քննարկման կդրվեն հետագա օրենսդրական նախաձեռնությունների շրջանակներում:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ ներկա դրությամբ արդեն շրջանառության մեջ է դրված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետև՝ նախագիծ):

Նախագծով առաջարկվում է կարգավորել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի, ավագանու նիստերի օրակարգերի նախագծերի հրապարակման և համապատասխան նիստերի առցանց հեռարձակման հետ կապված հարաբերությունները, ինչի արդյունքում կբարձրանա բնակչության իրազեկվածությունը և կապահովվի շրջանառվող նախագծերի վերաբերյալ բնակչության կարծիքի դրսևորումը և առաջարկությունների ներկայացումը:

Այս առումով նշենք նաև, որ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրով (հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1307-Լ որոշմամբ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ստանձնել է «Համայնքային կայքերի արդիականացում. տեղական մակարդակում հրապարակայնության, թափանցիկության և մասնակցայնության ամրապնդում» վերտառությամբ հանձնառությունը, որի կատարման շրջանակներում նախատեսվում է քայլեր ձեռնարկել, մասնավորապես, օրենսդրական փոփոխությունների իրականացման ուղղությամբ:

Նախատեսվող օրենսդրական փոփոխություններով 3000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքները կպարտավորվեն իրենց պաշտոնական համացանցային կայքերում հրապարակելու նաև՝

- համայնքում առկա կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),
- համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները,

- համայնքապետարանի կողմից տրված թույլտվությունների քանակի և տեսակների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը,

- համայնքում պետական կամ համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը:

Նշենք, որ հրապարակման ենթակա վերը թվարկված տեղեկությունները նախատեսված է ներառել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ցանկում:

Կայքերի շահագործմանն առնչվող հարցերում մեթոդական, տեխնիկական և այլ տեսակի օժանդակությանը վերաբերող՝ 2-րդ առաջարկի կապակցությամբ նշենք, որ ՏԻՄ-երը նման օժանդակություն ստանում են կայքը սպասարկող կազմակերպության կողմից՝ սպասարկման պայմանագրի շրջանակներում:

4-րդ առաջարկում, Ձեր կողմից հիշատակվող ժամանակացույցի 7-րդ կետի (կայքերի ամենամյա մրցանակաբաշխության անցկացում) կապակցությամբ նշենք, որ «Լավագույն համայնք» ամենամյա մրցանակաբաշխությանը, որպես համայնքի գործունեության առանձին չափանիշ, հաշվի է առնվում նաև համացանցային կայքի շահագործման մակարդակը:

Կրկին անդրադառնալով 7-րդ առաջարկին, որն առնչվում է մարզպետների գնահատմանը վերաբերող՝ ՀՀ ՏԿԱԻ նախարարի 06.11.2015թ.-ի թիվ 1167-Ն հրամանում փոփոխություններ կատարելուն, կարծում ենք, որ առավել ողջամիտ կլինի խնդրին անդրադառնալ ԱԺ-ում առաջին ընթերցում արդեն անցած «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո, քանզի այս նախագծի ընդունումը մի շարք բովանդակային փոփոխություններ է նախատեսվում տարածքային կառավարման մարմինների կառուցվածքի և գործառույթների առումով:

Կատարող՝ Գ. Մանուկյան
Տեղական ինքնակառավարման քաղաքականության
վարչություն, հեռախոս՝ 011-526-321